Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ
Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Registered Charity No 1173403
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading, 10th May 2020 Bulletin 19/2020

Apparition of the Holy Cross

Paul Preaching in Synagogue

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 17:1-15

Ամփիպոլիսէն եւ Ապողոնիայէն անցնելով՝ Թեսաղոնիկէ եկան, ուր Հրեաներուն ժողովարանը կար: Պօղոս ալ՝ իր սովորութեան համաձայն՝ մտաւ անոնց մէջ, ու երեք Շաբաթ օրեր խօսեցաւ անոնց հետ Գիրքերուն մասին, բացատրելով եւ փաստարկելով անոնց թէ Քրիստոս պէ՛տք է չարչարուէր ու մեռելներէն յարութիւն առնէր. եւ ըսաւ. "Այս Յիսուսը՝ որ ես կը հռչակեմ ձեզի, Քրիստո՛սն է": Անոնցմէ ոմանք անսացին ու միացան Պօղոսի եւ Շիղայի, նաեւ՝ բարեպաշտ Յոյներէն մեծ բազմութիւն մը. առաջնակարգ կիներէն հաւատացողներն ալ սակաւաթիւ չէին: Բայց չանսացող Հրեաները նախանձեցան, եւ քանի մը դատարկապորտ, գռեհիկ մարդիկ առնելով՝ բազմութիւն ժողվեցին, ամբողջ քաղաքին մէջ աղմուկ հանեցին, ու Յասոնի տան վրայ յարձակելով կը փնտռէին զանոնք՝ որ ամբոխին տանին: Երբ չգտան զանոնք, Յասոնը եւ քանի մը եղբայրներ քաշկռտելով տարին քաղաքապետներուն առջեւ՝ գոռալով. «Անոնք որ երկրագունդը տակնուվրայ ըրին՝ հոս ալ հասած են, ու Յասոն ընդունած է զանոնք: Ասոնք բոլորը կը գործեն կայսրին հրամաններուն դէմ, ըսելով թէ ուրիշ թագաւոր մը կայ՝ Յիսուս անունով»: Բազմութիւնն ու քաղաքապետները վրդովեցան՝ լսելով այս բաները: Բայց երբ երաշխիք առին Յասոնէն եւ միւսներէն՝ արձակեցին զանոնք:

Եղբայրներն ալ իսկոյն՝ գիշերուան մէջ՝ Բերիա ղրկեցին Պօղոսն ու Շիղան, որոնք հոն հասնելով՝ գացին Հրեաներուն ժողովարանը: Ասոնք աւելի ազնիւ էին՝ քան Թեսաղոնիկէի մէջ եղողները. Աստուծոյ խօսքը ընդունեցին լման յօժարութեամբ, եւ ամէն օր կը զննէին Գիրքերը, տեսնելու թէ այդպէ՛ս են այդ բաները: Ուստի անոնցմէ շատերը հաւատացին, ու մեծայարգ յոյն կիներէն եւ այր մարդոցմէն հաւատացողներն ալ սակաւաթիւ չէին: Բայց երբ թեսաղոնիկեցի Հրեաները գիտցան թէ Բերիայի մէջ ալ Պօղոս հռչակեց Աստուծոյ խօսքը, հո՛ն ալ եկան ու գրգռեցին բազմութիւնը: Այն ատեն եղբայրները իսկոյն Պօղոսը ճամբեցին՝ որ երթայ մինչեւ ծովեզերքը, բայց Շիղա եւ Տիմոթէոս մնացին հոն: Անոնք որ կը տանէին Պօղոսը՝ հասցուցին զայն մինչեւ Աթէնք, ապա մեկնեցան՝ պատուէր ստանալով Շիղայի ու Տիմոթէոսի համար, որ շուտով գան իրեն:

Acts 17:1-15

In Thessalonica

When Paul and his companions had passed through Amphipolis and Apollonia, they came to Thessalonica, where there was a Jewish synagogue. As was his custom, Paul went into the synagogue, and on three Sabbath days he reasoned with them from the Scriptures, explaining and proving that the Messiah had to suffer and rise from the dead. "This Jesus I am proclaiming to you is the Messiah," he said. Some of the Jews were persuaded and joined Paul and Silas, as did a large number of God-fearing Greeks and quite a few prominent women.

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

But other Jews were jealous; so they rounded up some bad characters from the marketplace, formed a mob and started a riot in the city. They rushed to Jason's house in search of Paul and Silas in order to bring them out to the crowd. [a] But when they did not find them, they dragged Jason and some other believers before the city officials, shouting: "These men who have caused trouble all over the world have now come here, and Jason has welcomed them into his house. They are all defying Caesar's decrees, saying that there is another king, one called Jesus." When they heard this, the crowd and the city officials were thrown into turmoil. Then they made Jason and the others post bond and let them go.

In Berea

As soon as it was night, the believers sent Paul and Silas away to Berea. On arriving there, they went to the Jewish synagogue. Now the Berean Jews were of more noble character than those in Thessalonica, for they received the message with great eagerness and examined the Scriptures every day to see if what Paul said was true. As a result, many of them believed, as did also a number of prominent Greek women and many Greek men.

But when the Jews in Thessalonica learned that Paul was preaching the word of God at Berea, some of them went there too, agitating the crowds and stirring them up. The believers immediately sent Paul to the coast, but Silas and Timothy stayed at Berea. Those who escorted Paul brought him to Athens and then left with instructions for Silas and Timothy to join him as soon as possible.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 7:14-23

Իսկ երբ տօնը կէս եղաւ՝ Յիսուս բարձրացաւ տաճարը, եւ կը սորվեցնէր: Հրեաները կը զարմանային ու կ'ըսէին. «Ի՞նչպէս ասիկա գիտէ Գիրքերը, քանի բնա՛ւ սորված չէ զանոնք»: Յիսուս պատասխանեց անոնց. «Իմ ուսուցումս՝ ի՛մս չէ, հապա զիս ղրկողի՛նն է: Եթէ մէկը ուզէ գործադրել անոր կամքը, պիտի գիտնայ թէ այս ուսուցումը Աստուծմէ՛ է, թէ ես ինձմէ կը խօսիմ: Ա՛ն որ կը խօսի ինքնիրմէ՝ կը փնտռէ ի՛ր իսկ փառքը, բայց ա՛ն որ կը փնտռէ զինք ղրկողին փառքը՝ անիկա՛ ճշմարտախօս է, եւ անոր քով անիրաւութիւն չկայ:

Մովսէս չտուա՞ւ ձեզի Օրէնքը. բայց ձեզմէ ո՛չ մէկը կը գործադրէ Օրէնքը: Ինչո՞ւ կը ջանաք սպաննել զիս»: Բազմութիւնը պատասխանեց. «Դե՛ւ կայ քու ներսդ. ո՞վ կը ջանայ սպաննել քեզ»: Յիսուս պատասխանեց անոնց. «Գործ մը ըրի, եւ բոլորդ ալ կը զարմանաք: Մովսէս տուաւ ձեզի թլփատութիւնը, (որ ո՛չ թէ Մովսէսէ էր՝ հապա նախնիքներէն,) ու մարդ կը թլփատէք Շաբաթ օրը: Եթէ մարդ կը թլփատուի Շաբաթ օրը՝ որպէսզի Մովսէսի Օրէնքը չլուծուի, կը դառնանա՞ք ինծի դէմ՝ որ ամբողջ մարդ մը բժշկեցի Շաբաթ օրը:

Jesus at the feast

The Holy Gospel of Jesus Christ according to John 7:14-23

Jesus Teaches at the Festival

Not until halfway through the festival did Jesus go up to the temple courts and begin to teach. The Jews there were amazed and asked, "How did this man get such learning without having been taught?"

Jesus answered, "My teaching is not my own. It comes from the one who sent me. Anyone who chooses to do the will of God will find out whether my teaching comes from God or whether I speak on my own. Whoever speaks on their own does so to gain personal glory, but he who seeks the glory of the one who sent him is a man of truth; there is nothing false about him. Has not Moses given you the law? Yet not one of you keeps the law. Why are you trying to kill me?"

"You are demon-possessed," the crowd answered. "Who is trying to kill you?"

Jesus said to them, "I did one miracle, and you are all amazed. Yet, because Moses gave you circumcision (though actually it did not come from Moses, but from the patriarchs), you circumcise a boy on the Sabbath. Now if a boy can be circumcised on the Sabbath so that the law of Moses may not be broken, why are you angry with me for healing a man's whole body on the Sabbath?

Սուրբ Խաչի երևման տոն

Այս տոնը Երուսաղեմում Սբ. Խաչի նշանի երևման հիշատակն է: 351 թվականին, ցերեկվա ընթացքում Գողգոթայից մինչև Ձիթենյայց լեռը երկնքում երևում է մի լուսե Խաչ: Այդ զարմանահրաշ դեպքի մասին Երուսաղեմի Կյուրեղ եպիսկոպոսը նամակ է գրում Կ. Պոլսի Կոստանդ կայսերը՝ այդ զարմանալի երևույթը համարելով իբրև ուղղափառ դավանության ճշմարտության ապացույց: Այդ պատճառով էլ Կյուրեղ Երուսաղեմացին հորդորում է Կոստանդ կայսերը հրաժարվել արիոսականներին պաշտպանելուց:

Երուսաղեմի Կյուրեղ եպիսկոպոսի այդ նամակը թարգմանվել է հայերեն և ամեն տարի ընթերցվում է Սբ. Խաչի երևման տոնին: Հայ Առաքելական Եկեղեցին Սբ. Խաչի տոնը տոնում է Զատիկից 28 օր հետո: Սբ. Հարության տոնի շարժականության պատճառով Սբ. Խաչի երևման տոնը կարող է տատանվել ապրիլի 19-ից մինչև մայիսի 23-ը:

Feast of Apparition of the Holy Cross

This feast is dedicated to the Apparition of the Holy Cross in Jerusalem. At noon on May 19, 351, a bright, luminous cross appeared over the skies of Jerusalem, centred over an area spanning from the Mount of Olives (where Christ was betrayed and arrested) to Golgotha (where Christ was crucified). Awestruck, the faithful of Jerusalem rush to church to give thanks and glorify the Lord. Bishop Cyril (later St. Cyril of Jerusalem) subsequently wrote a letter to Emperor Constantine of
Byzantium wherein he describes the miraculous and beautiful scene. St. Cyril tells Constantine that the apparition is a true testimony of the orthodox faith of Christianity.
Further, St. Cyril exhorts the Emperor that the appearance is a sign for him to remain steadfast in his faith, and to stop defending the heretical movement of Arianism and its promulgators. The Armenian translation of the Bishop's letter has been preserved by the Church, and is read each year on the Feast of the Apparition of the Holy Cross. The Armenian Church celebrates this feast 28 days following Easter Sunday.

Why should I support my Church?

The following is addressed to every member of our community

There is a prevailing view that rich benefactors and trusts will continue to support the Church and give the necessary monies to cover all its needs and activities. That might have been true at one time, but no longer: the church needs continuous, dependable and consistent regular income from more sources.

Our clergy always stress to us that the church is not just the building, the clergy and the church services: it exists and thrives only through its congregations**. Therefore, your participation and support is vital, not only by attending the church but also with your time and financial contribution to the church, without believing complacently that a few wealthy donors can be called on.** The church needs all its adherents and should not be restricted to such a small set of active people.

So when you enter a church for a service expecting the doors to be open, the building to be lit up and heated, a priest at the altar, candles in the vestry, a choir and organist performing - think of what it takes to make all this happen. We must not take all this for granted.

How can you help?

Firstly, please become a registered parishioner, the Church will appreciate the generosity of your regular dues. Small annual amounts by many add up to a worthwhile level. The income from weddings and baptisms is not the reliable basis for sustained parish activities.

Become an annual dues paying member,
Take part in parish activities,
Let your voice be heard,
Be eligible to vote and
Be elected to one of Parish offices.

Secondly, consider giving additional donations to sustain a thriving church in all its aspects. Do not just dip in and out of the church when you come expecting others to provide – you are an important member of the church too.

This is an issue for all the community and should not be avoided.
Thank You

To Register

Please ask St Yeghiche Church office for a copy of an application form, or visit https://www.styeghiche.org.uk/sacraments/forms-2/members-registration-form/

To Donate

- By Bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26

OR

- By cheque to "St Yeghiche Armenian Church", 13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB.

Մեկնութիւն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ

«Ինչ որ տեսանք եւ լսեցինք, պատմում ենք ձեզ, որպէսզի դուք էլ հաղորդակից լինէք Նրան մեզ հետ, ինչպէս որ մենք հաղորդութիւն ունենք Հօր հետ եւ նրա Որդու՝ Յիսուս Քրիստոսի հետ» (Ա. Յովհ. 1:3):

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Քրիստոսասէր եղբայրնե՛ր եւ քոյրե՛ր, Սուրբ Յարութեան տօնական շրջանի հինգերորդ կիրակին է, երբ նշում ենք Երուսաղէմի երկնքում Սուրբ Խաչի երեւման տօնը: Այն ամբողջ քրիստոնեայ աշխարհի համար կարեւոր վկայութիւն է Աստծոյ շարունակական յայտնութեան եւ խնամքի: 351 թուականի մայիսի 7-ին Ձիթենեաց լեռից մինչեւ Գողգոթա փայլել է հսկայական լուսաւոր խաչը, որի պայծառութիւնն աւելին է եղել անգամ առաւոտեան ժամի արեւի լոյսից: Տէրունական լուսաւոր խաչը մի քանի ժամ շարունակ փայլել է երկնքում, ինչը տեսել են այդ պահին Երուսաղէմում գտնուող բոլոր մարդիկ: Ականատեսները մի քանիսը չէին, միայն քրիստոնեաները չէին, այլ ամբողջ քաղաքը՝ տեղաբնակներ եւ եկուորներ, քրիստոնեաներ, հրէաներ եւ հեթանոսներ: Ականատեսի կողմից իսկ գրուած պատմական վաւերաթուղթ է Երուսաղէմի այդ օրերի եպիսկոպոս սուրբ Կիւրեղի նամակը՝ ուղղուած Կոստանդ կայսերը: Այս նամակը դեռ 5-րդ դարում Մաշտոցի աշակերտներն են հայերեն թարգմանել, որ մինչեւ այժմ ընթերցւում է եկեղեցիներում այս տօնի օրը:

Ինչո՞ւ Յինունքի այս օրերին, երբ ամէն օրն իբրեւ կիրակի եւ յարութեան օր ենք ընդունում, Սուրբ Խաչին նուիրուած տօն ունենք: Որովհետեւ Քրիստոսի խաչը Փրկչի եւ փրկագործութեան մասին ամէնից խօսուն կերպով “պատմող” նշանն է: Հէնց իր՝ Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացի եպիսկոպոսի խօսքերը լաւագոյնս սահմանում են սա. ***«Դաւանում եմ Խաչը, քանզի գիտեմ Յարութիւնը»*:** Այս երեւման հրաշքին ականատես շատ հրէաներ եւ հեթանոսներ են ընդունում եւ հաւատում Քրիստոսին՝ մկրտուելով եւ համալրելով քրիստոնեաների շարքերը: Այս դէպքից երէք դար առաջ Պօղոս առաքեալը գրում է Կորնթոսի քրիստոնեաներին. ***«Իսկ որովհետեւ հրէաները նշան են հայցում, եւ հեթանոսները իմաստութիւն են փնտռում, մենք քարոզում ենք խաչուած Քրիստոսին՝ ի գայթակղութիւն հրէաների եւ ի յիմարութիւն հեթանոսների. բայց նրանց համար, որ կանչուած են, հրէաներ թէ հեթանոսներ, Քրիստոսը Աստծու զօրութիւնն ու Աստծու իմաստութիւնն է» (Ա Կորնթ. 1.22-24):***

Մինչեւ այժմ խաչեալ Քրիստոսի եւ խաչի քարոզութիւնը գայթակղութիւն են հրէաների համար եւ յիմարութիւն նոր հեթանոսների ու անաստուածների համար: Նրանց շարքում յաճախ ենք հանդիպում մարդկանց, որոնք Աստծոյ եւ հաւատքի հարցերում միշտ տեսնելու պայմանն են դնում՝ տեսնեմ ու նոր հաւատամ, շոշափեմ եւ նոր խոստովանեմ ու դաւանեմ Աստծուն:

Այս մեծ երեւումը եւս մէկ ապացոյց է այն բանի, որ քրիստոնէական մեր հաւատքը ոչ միայն մարդկային խօսքով ու իմաստութեամբ է, այլ նաեւ Աստծոյ Հոգու շարունակական յայտնութեամբ եւ զօրութեամբ, որովհետեւ վկայութիւնը ե՛ւ մարդկանցից է, ե՛ւ երկնքից՝ Աստծուց: Սա կարծես ամբողջութեամբ սաղմոսի խօսքերի կատարումն է, ուր ասւում է. ***«Երկինքն է պատմում Աստծոյ փառքը… Տիրոջ վկայութիւնն ստոյգ է եւ իմաստուն է դարձնում տհասներին..» (Սղմ.18:2,8)***: Յաճախ են անգիտութիւնն ու անհաւատութիւնը խաւարի հետ յամեմատւում, եւ Աստծո ճանաչողութեան կամ այլ բառով՝ աստուածգիտութեան լոյսը լուսաւորում է միտքն ու հոգիները, որպէսզի գիտակցենք, որ հոգեւոր ձեւաչափի մէջ հաւատալուց է սկսւում հասկանալը: Քրիստոս Լոյս կոչեց Իրէն, Որով փարատւում են մեր խաւարները, ***«բարձունքից արեգակը մեզ կ’այցելի ծագելու նրանց վրայ, որոնք նստած են խաւարի եւ մահուան ստուերների մէջ»(Ղուկ. 1.79):*** Քրիստոս է արդարութեան Արեգակը, որ շարունակաբար լուսաւորում է մարդկութեան բոլոր ժամանակների հոգեւոր եւ մտաւոր մթութիւնները: Եկեղեցու սուրբ հայրերը Սուրբ Խաչի այս լուսաւոր երեւումը յամեմատում են Եգիպտոսից Աւետեաց երկիր քայլող իսրայէլացիներին Սինա լերան վրայ յայտնուած լուսեղէն ամպի տեսիլքի հետ, երբ Աստուած իջաւ եւ Մովսէսի միջոցով պատուիրանները տուեց (տե՛ս. Ելից 19:16): Ինչպէս լուսեղէն ամպը, եգիպտական անհաւատութիւնից դուրս բերելով հրէաներին, առաջնորդում էր դէպի Աւետեաց երկիր, այնպէս էլ Քրիստոսի խաչը դէպի Խաչեալի հաւատք է առաջնորդում հոգեւոր անապատում եղող հոգիներին:

Շատերի կարող էին պնդել, թէ ինչու է այս երեւումը Քրիստոսի անուան հետ կապւում, չէ՞ որ խաչի նշանը յայտնի էր Քրիստոսի գալուստից դարեր առաջ. Կեռխաչի կամ սուաստիկայի (swastika) գործածումը մարդկութեան համար նոր չէ, իսկ Հելլենական եւ Հռոմէական աշխարհում հարիւրամեակներ շարունակ իբրեւ մահապատժի տեսակ կիրարկուել է խաչը, որով Քրիստոս եւս խաչուեց: Սակայն Երուսաղէմում Գողգոթայից մինչեւ Ձիթենեաց լեռ ցոլացող այս լուսեղէն խաչի երեւումը ցոյց տուեց, որ դա Գողգոթայի բարձունքում խաչուած եւ Ձիթենեաց լեռից համբարձում առած Յիսուս Քրիստոսի նշանն է:

Ձիթենեաց լեռան վրայից Քրիստոսի համբարձման ժամանակ երկու լուսազգեստներ առաքեալներին խօսել էին նաեւ Տիրոջ երկրորդ եւ փառաւոր գալուստի մասին: Տէրը կարող էր այս նշանը տեսանելի դարձնել ամբողջ աշխարհին բայց առայժմ միայնդ երուսաղէմացիներին ցոյց տուեց, որոնք, սա տեսնելով, ապաշխարութիւն եւ մկրտութիւն ունեցան: Բոլոր ազգերի հոգեւոր մայրաքաղաք կարող է դիտուել Երուսաղէմը, ուր տարբեր ազգի ու կրօնի մարդիկ կային, որոնք, այս տեսնելով ու մկրտուելով, Քրիստոսի հաւատքով մէկացան: Իր երկրորդ՝ ահեղ գալուստին մասին խօսելիս Քրիստոս բոլոր ազգերի համար տեսանելի խաչի նշանի մասին եւս ասաց. ***«Եւ ապա երկնքի վրայ մարդու Որդու նշանը պիտի երեւայ, ու այդ ժամանակ երկրի բոլոր ազգերը լացուկոծ պիտի անեն եւ պիտի տեսնեն մարդու Որդուն, որ գալիս է երկնքի ամպերի վրայով՝ զօրութեամբ եւ բազում փառքով:***

Եւ նա պիտի ուղարկի իր հրեշտակներին մեծ շեփորով, ու պիտի հաւաքեն նրա ընտրեալներին չորս կողմերից՝ երկնքի ծագերից մինչեւ միւս ծագերը»(Մատթ. 24:29-30):

Փրկչի խաչի նշանը քրիստոնեաներիս համար ամենակարճ դաւանութիւնն է, ամենակարճ աղօթքը եւ հաստատուն պաշպանութիւնը դիւական զօրութիւններից:

Մենք էլ, յիշելով սա, զօրանանք խաչի փրկութեան հաւատի մէջ եւ կրկնենք Առաւօտեան ժամերգութեան մաղթանքը. *«Տէ՛ր Յիսուս, Քո խաչը թող մեզ ապաւեն լինի, երբ Հօր փառքով երեւաս լուսաւոր ամպերի մէջ: Այնժամ մենք՝ Քեզ յուսացողներս, թող չ'ամաչենք, այլ Քո մեծ զօրութեամբ բերկրենք Քո Աջ կողմում՝ իբրեւ լոյսի որդիներ եւ ցերեկուայ զաւակներ» (Ժամագիրք):*

Թող յարուցեալ Քրիստոս Իր խաչի հովանու տակ պահի ու պահպանի մեր հայրենիքն ու եկեղեցին, մեր ընտանիքներն ու աշխարհասփիւռ Իր ժողովրդին այժմ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ

Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

Տոն Սուրբ խաչի երևման

Մայիսի 10-ին Առաքելական Սուրբ Եկեղեցին հիշատակում է Սուրբ Խաչի երեւման տոնը՝ մեկ անգամ եւս հիշելով Տիրոջ չարչարանքները, նրա խաչելությունը, եւ խաչի վրա նրա թափած անմեղ արյան շնորհիվ մարդկային ցեղի փրկությունը:

Այս տոնը պատմական մի դեպքի հիշատակությունն է, երբ **351 թ.** մայիսին, **Կյուրեղ Երուսաղեմացի** հայրապետի օրոք, օրվա երրորդ ժամին (**ժամը 9-ին**) երկնքում երեւում է Փրկչի խաչի նշանը՝ տարածվելով Գողգոթայից մինչեւ Ձիթենյաց լեռը:

Այս դեպքին ականատես են լինում ոչ միայն Երուսաղեմում բնակվող քրիստոնյաները, այլեւ տարբեր դավանանքներին ու կրոններին պատկանող մարդիկ: Խաչի պայծառ երեւումից անգամ արեգակն է մթագնում: Բոլորը շտապում են եկեղեցի, ի խորոց սրտի աղոթում առ Աստված՝ գոհություն հայտնելով Բարձրյալին՝ այս մեծ շնորհին արժանացնելու համար:

Երկնային հրաշքի շնորհիվ շատեր հավատում են Հիսուսին, մկրտվում սուրբ Կյուրեղի ձեռքով՝ անդամագրվելով Քրիստոսի Եկեղեցուն: Այս դեպքի առթիվ Կյուրեղ հայրապետը մի նամակ է գրում Բյուզանդիայի **Կոստանդին** կայսրին, որը Մեծն Կոստանդիանոսի որդին էր: Նամակում սուրբը պատմում է Երուսաղեմում խաչի երեւման մասին՝ հորդորելով, որ վերջինս անհողդողդ մնա իր քրիստոնեական ճշմարիտ հավատի մեջ, ինչպես նաեւ հավատարիմ՝ նիկիական դավանությանը:

Մեր բազմադարյան պատմությամն մեջ էլ քիչ չեն խաչի երեւումները: Երանելի **Կորյունը**, ինչպես նաեւ քերթողահայր **Մովսես Խորենացին**, Հայ Եկեղեցու եռամեծ վարդապետ **Մեսրոպ Մաշտոցի** մահվան եւ թաղման կապակցությամբ արձանագրում են, որ Վաղարշապատ քաղաքում օրեր շարունակ խաչի լուսապայծառ նշանը փայլել է այն տան վրա, ուր սուրբն ավանդել էր իր հոգին: Այդ նույն նշանն էլ առաջնորդ է եղել բազմությանն ամբողջ հուղարկավորության ընթացքում: Խաչը Հռոմեական կայսրության ժամանակ մահապարտներին անարգելու եւ նախատելու համար էր: Հին Ուխտում էլ կարդում ենք. «**Անիծված է նա, ով կախված է փայտից**» (Բ Օր. 21; 23):

Աստվածորդին միացավ խաչափայտին՝ սրբագործելով այն եւ Իր Սուրբ Արյամբ մեզ ազատեց սատանայի գերությունից: Եթե մինչեւ Քրիստոսի Խաչն անարգանքի եւ նախատինքի նշանն էր, ապա Տիրոջ խաչելությամբ նրա մեջ դրվեց կյանքի խորհուրդը, եւ մարդ արարած հնարավորություն ստացավ նոր արարած լինելու. «**Եթե մեկը Քրիստոսի մեջ է, ապա նա նոր արարած է**» (Բ Կորնթ. 5:17): Քրիստոս խաչի վրա ներեց մեզ, ջնջեց մեր մեղքերի պարտամուրհակը՝ գամելով այն խաչափայտին:

Մարդկության փրկության համար մարմնացած Աստված խաչվեց, թաղվեց, բայց երրորդ օրը հրաշափառապես հարություն առավ մեռելներից՝ քանդելով մահվան կապանքները: Այո՛, հարություն առավ Տերը, որովհետեւ Լույսը չէր կարող գերեզմանի մթության մեջ մնալ: Եվ այս իրողությունը նկատի ունենալով է, որ սուրբ **Կյուրեղ Երուսաղեմացին** ասում է. «**Դավանում եմ Խաչը, քանզի գիտեմ Հարությունը**»: Հետեւաբար խաչը մեզ համար հույսի, սիրո, հաղթանակի եւ փրկության նշանն է, որի վրա Աստվածորդին պարտության մատնեց սատանային՝ մեր առաջ բացելով երկնքի դռները, որ մինչ այդ փակված էին մեր նախածնողներ Ադամի ու Եվայի անհնազանդության պատճառով: Հիսուս խաչի վրա ցույց տվեց իր անհուն սերն ու անբավ ողորմածությունն ադամորդիներիս նկատմամբ: Տերն իր փրկագործության խորհրդով խաչը վերածեց հաղթության նշանի: Ինչպես ասում է Պողոս առաքյալը. «**Քա՛վ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով**» (Գաղ. 6; 14): Այո՛, տերունական նշանը ճշմարիտ քրիստոնյաներիս համար պարծանքների պարծանքն ու Աստծո անսահման սիրո արտահայտությունն է անկյալ մարդու նկատմամբ: Ճիշտ է, անհավատ ու Տիրոջը չճաշակած մարդկանց համար խաչի վրա Քրիստոսի այս զոհողությունն անիմաստ եւ անհասկանալի է թվում, բայց մեզ համար, որ մեր սրտերի մեջ ընդունել ենք ճշմարիտ Աստծուն՝ Հիսուս Քրիստոսին, Խաչը դարձել է փրկության գրավականը: Անգիտության խավարում խարխափող այս մարդկանց մասին է առաքյալի խոսքը. «**Շատերը, որոնց մասին շատ անգամ ասել եմ ձեզ եւ այժմ էլ լալով եմ ասում, ընթանում են որպես թշնամիներ Քրիստոսի խաչի. նրանց վախճանը կորուստն է, նրանց աստվածն իրենց որովայնն է, եւ փառքը՝ իրենց ամոթը: Նրանք միայն երկրավոր բաներ են խորհում**» (Փիլիպ. 3; 18-19)

Աղբյուր՝ «Սյունյաց կանթեղ»

3: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By HG Bishop Hovakim Manukyan and Armenian Community of Great Britain and Republic of Ireland for the soul of their Compatriots serving in armies around the world who fell During the WWI and WWII and all other wars.
A special prayer service will be held at the end of the Divine Liturgy respecting the memories of all those brave defenders who fell paving the path to freedom and sowing the seeds of free and independent Armenia and Artsakh.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրհնէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանին** 07548 777 147:

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)
For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted*:

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

St Yeghiche Parish Council appeals to all members for ***prompt*** payment of their **annual membership dues and generous donations,** thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques pay-able to: ***"St Yeghiche Armenian Church"***. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.